

ԶԱՐԲԱՆԱԼԻՔ ԵՐԿՆԻՑ

Ա

ԵՐԿՆԻՑ

Այն խաւարը որ արեւուն մտնելէն մինչեւ ծագելը մեր կիսագնդին վրայ կը տարածուի, երկրիս սեպհական մասնաւոր երկոյթ մըն է, որուն հաղորդ չեն բնաւ տիեզերաց միւս մասունքը: Երբոր խորին գիշերի մը լուսնիստ անդորրութիւնն ամեն կողմանէ կը պատէ զմեզ, պէտք մը կը զգանք վերանալ բարձրանալ բոլորովին տիեզերաց տեսարանին մէջ. և այնպէս կը կարծենք իբր թէ մեր երկիրն արարչութեան կեդրոնն ըլլար, և անոր շորս գին պատէին տիեզերք: Բայց քանի մը վայրկեան մենք մեզի դալով մէկէն կ'ըմբռնենք թէ որչափ մոլար է աչաց այս խաբէութիւնը, և կու տանք մենք զմեզ բուն պատճառները քննելու: Յայտնի է որ արեւը չկրնալով մի և նոյն առարկայի մը ամեն կողմունքը միանգամայն լուսաւորել, բայց եթէ այն մասունքը որ դէպ 'ի իրեն դարձած են, անոր համար ալ երկրիս գնդին կէսը միայն կրնայ լուսաւորել, որով կը հետևի թէ գիշեր ըսելով պիտի իմանանք անոր չլուսաւորուած կողման վիճակը:

Եթէ երկրագունտը միջոցին ընդարձակութեան մէջ կախուած ենթադրենք՝ պիտի գիտնանք որ արեւուն դարձած մասը միայն լուսաւորուած է, մինչդեռ յանդիմանակաց կիսագունտը ստուերի մէջ թաղուած կ'ըլլայ, և թէ այն ստուերը բրդան ձև կ'ընծայէ աչաց: Բաց 'ի ասկէ, ինչպէս որ երկիրս ինքն իր վրայ ալ կը դառնայ, իրեն ամեն կէտերը հետզհետէ արեւուն կը դառնան և յաջորդաբար լուսէ կ'անցնին խաւար. և ասկէ առաջ կու գայ յաջորդութիւն տուրնջեան և գիշերի երկրիս ամեն կողմերը: Այս պարզ խորհրդածութիւնը միայն բաւական է ցուցնելու թէ այն երկոյթը որուն գիշեր անունը կու տանք, երկրիս միայն սեպհական է, և թէ

երկինք, ինչպէս նաև տիեզերաց միւս մասունքն, անկէ բոլորովին անկախ են:

Անոր համար եթէ գիշերուան որ և իցէ ժամուն՝ մտքով երկրիս երեսէն վեր բարձրանալք, փոխանակ միշտ խաւարի մէջ մնալու, պիտի գտնենք արեւն որ լուսեղէն հեղեղներ կը հոսէ տիեզերաց ծոցը: Եթէ մինչև մոլորակաց մէկուն բարձրանալք, որ երկրիս նման կը թաւալին այն ընդարձակութեան մէջ ուր մենք ալ կը գտնուինք, պիտի տեսնենք որ երկրիս գիշերային մթութեան խաւարը չի տարածուիր մինչև այն աշխարհաց վրայ. և թէ այն ժամանակն որ երկրիս վրայ մեզի համար 'ի հանդիստ նուիրեալ է, ինչուան այն կողմերն իր ազդեցութիւնը չի կրնար տարածել: Մինչդեռ երկրիս վրայ ամեն էակք խաղաղասիք լուռ գիշերի անդորրութեանը մէջ ընկղմած են, երկնից վրայ բնութեան ստատուածադիր զօրութիւնքն իրենց շողշողենի պաշտամունքը կը շարունակեն կատարելու. արեւը կը փայլի, կեանք կ'արծարծի, շարժումն ամենեւին չի դադրիր. և լուսոյ իշխանութիւնը առաջ կը վարէ երկնից մէջ իր արարչապետին հրամանները. ինչպէս նաև մեր յանդիմանակաց կիսագնդին վրայ ալ, մինչդեռ մենք նոյն ժամուն մեր կիսագնդին վրայ բնակող էակաց հետ մէկտեղ քնոյ անշարժութեան մէջ ընկղմած ենք: Շատ կարևոր է որ մենք զմեզ ամեն բանէ առաջ վարժեցունենք որ երկիրս ընդարձակութեան ծոցին մէջ անջատ ու առանձնակ է, և տպաւորենք մեր մտացը մէջ թէ այն ամեն երկոյթները որ մեր գնդին վրայ կը տեսնենք՝ իրեն միայն սեպհական են. և տիեզերաց միւս մասանցն հետ ամենեւին վերաբերութիւն մը չունին: Բիւրաւոր գունտեր երկրիս նման՝ ընդարձակութեան մէջ կը թաւալին. որոնց մասնաւորութիւնքը ետքէն պիտի տեսնենք:

Առաջին տպաւորութեամբ կը կտրծենք թէ երկիրս իբր տիեզերաց ստորին կէսն ըլլար և երկինքը վերին կէսը: Այս երկոյթս մեր տեսութեան պատ-

րանքն է: Երկինքը և երկիրը զատ զատ երկու արարչութիւն չեն կազմեր: Երկիրս երկնից մէջն է. և երկինքն է այն անհուն միջոցը, անսահման տարածութիւնը, անեզր դատարկութիւնը, զոր բնաւ սահման մը չի կրնար փակել. ոչ ծայր ունի և ոչ վերջ, ոչ վեր ունի և ոչ վար, ոչ ձախ և ոչ աջ. և է անբաւութիւն միջոցաց, որոնք մէկմէկու կը յաջորդեն ամեն կողմանէ: Երկիրս նիւթեղէն պղտի գունտ մըն է այն միջոցին մէջ կախուած, առանց յենարանի, փնտալի մը նման որ օդուն մէջ ինքն իրմէ կեցած ըլլայ, կամ այն օդապարիկ գունտերուն նման որ կը ճախրեն մթնոլորտին մէջ: Երկիրս ալ աստղ մըն է երկնից մէջ, անոր մասն է, և անոր բնակիչը, որ իրեն նման ուրիշ բազմութիւ գունտերուն հետ մէկտեղ, ազատ ամեն կողմանէ, կը պարեն միջոցին մէջ:

Ուրեմն երկինքն է այն ընդարձակութիւնն որ ամեն կողմանէ կը պատէ զմեզ, և երկիրս այն ընդարձակութեան մէջ առկախեալ գունտ մըն է: Սակայն երկիրս միայնակ չէ. այն ամեն աստղերը որ կը շողշողան երկնից երեսը, անոնք ալ ազատ գունտեր են, արեւներ են, որ իրենց բնիկ լուսովը կը փայլին. մեզմէ շատ հեռու են. բայց անոնցմէ մեզի մօտ գտնուող աստղեր ալ կան, որոնք աւելի այն աստղին կը նմանին, որուն վրայ կը բնակինք. և անոնք արեւներ չեն, այսինքն իրենք իրենցմէ լուսաւոր չեն, այլ խաւարին երկիրներ են, և մեր երկրին հետ արեւէն կ'առնուն իրենց լոյսը: Այս աշխարհներն՝ որոնք մոլորակք կ'ըսուին, մէկ ընտանիք մը կը կազմեն. մեր աշխարհքն ալ այն ընտանեաց մէկ անդամն է, և բոլորը մէկտեղ մեր արեւուն շորս կողմը կը պարեն, որ անոնց կեդրոնը կեցած իր լուսովն անոնց խաւարը կը փարատէ, և իր ջերմութեամբը զանոնք կը ջեռուցանէ: Ճախրելով ընդարձակութեան ծոցին մէջ, որ ամեն կողմանէ կը պաշարէ զիրենք, երկնից տիեզերածովուն մէջ կ'օրօրուին այլ և այլ նաւաց տորմիլի նման: Արեւներու

բազմութիւն մը, մերինին նման, շուրջ պատած բազմութիւ աշխարհներէ, որոնց վառարանն ու ջահն են, նմանապէս կը ճանապարհորդեն ընդարձակութեան ամեն կողմը. այս արեւներս, այն աստղերը՝ երկնից մարմանդներուն մէջ սփռուած կը փայլին: Անհուն հեռաւորութիւն կայ մեր ու այն արեւներուն մէջ տեղը, այնպիսի հեռաւորութիւն՝ որ մեր զօրաւոր թուարկութեան ամենամեծ թիւքն անգամ հազիւ հազ կրնան անոնցմէ առ մեզ եղած փոքրագոյն միջոցը չափել: Փոխադարձ հեռաւորութիւն մըն ալ, զոր մեր թուանշանները չեն կրնար բացատրել, այն աստղներն իրարմէ կը բաժնէ, ու կը մրդէ զանոնք խորութենէ՝ ի խորութիւն: Ինչպէս անեզր է միջոցը, նոյնպէս այն արեւներն ալ այնչափ անհամար են թուով, որ համբելու համար զանոնք մեր թուանշանները չեն կրնար. եթէ միլիոններ միլիոններու վրայ աւելցունենք, չեն հասնիր անոնց բազմութիւնը համբելու: Թող փորձէ մարդուս միտքն, եթէ կրնայ, երեւակայելու միանգամայն անոնց անհամար բազմութիւնը և մէկմէկէ ունեցած հեռաւորութիւնը: Ինքն իրմէ դուրս ելած և իր ոչընչութիւնը ըմբռնած, այս անհուն անչափութեան առջևը անբարբառ կ'ընկճի ու կը խոնարհի, և այսպիսի անպատմելի սքանչելեաց Արարչապետին մեծութեանը վրայ կը հիանայ: Վերանալով անդադար և բարձրանալով երկնից խորերը, կտրելով անցնելով այս անեզրովկիանու ափունքը, մեր մտացն ընդ առաջ կ'ելլեն հեազհետէ նոր միջոցներ և միշտ նորանոր աշխարհներ. երկինք կը յաջորդեն երկնից, գունտք գնտոց. ընդարձակութեան անապատներէն անդին ուրիշ անապատներ կը բացուին դէմը, անչափութիւններէն անդին ուրիշ անչափութիւնք կը պարզուին առջևը. և երբ միտքն այսպէս թե առած արագ արագ մղէ իր ճախրանքը միջոցին խորերը՝ անդադար դարուց՝ ի դարս, և այն անմատչելի սահմաններէն ալ անդին անցնի, որ երեւակայութիւնը

միայն կրնայ ըմբռնել, դարձեալ չբըն-
նուած տարածութեան մը անհունու-
թիւնը կը բացուի առջևը. տարածու-
թեանն անհունութիւնն ընդդէմ կ'ելլէ
ժամանակին անհունութեանն, մրցե-
լով անդադար իրարու հետ, բայց ոչ
երբէք մէկը կրնալով յաղթել մէկալին.
և միտքը աշխատութենէ պարտասեալ
կանգ կ'առնու անհուն արարչութեան
նախադրանքը քով, իբր թէ և ոչ քայլ
մը առած ըլլար ընդարձակութեան մէջ:

Երևակայութիւնն իր ճախրանքը կախ
կը թողու, և ընկճուած կը մնայ. և կը
գոչէ գողտրաբարբառ հոգւոյ մը հետ.
«Աստեղք, բանակ լուսաւորաց, որ ա-
մեն դարերէ առաջ ձեր շողշողուն վրան-
ները շափիղեայ դաշտաց մէջ կանգնե-
ցիք, ո՞վ պիտի կարենայ ձեր հրատապ
բիւրաւորաց թիւը պատմել, բայց եթէ
Այն, որ կը հրամայէ ձեր ոսկեփայլ
կառացը երկնից ընդարձակութեան մէջ
թաւալելու: Ո՞վ է այս երկրիս բնակին,
որ քու բանակացդ առջև կարենայ չըզ-
գալ անմահական յուզմունքդ, ո՞վ յա-
ւիտենականութիւն: Ի՞նչ զարմանք, որ
եթէ հոգին ընկճուած իր բնիկ մտածու-
թեանց բեռանը տակ, և աչքը մոլորած
անդնդոց խորերը, քու լուսաւորու-
թեանցդ մէջ տեսնէ հանդերձեալ ան-
մուտ փառաց հաւաստիքը:»

Երկնից անբաւութիւնը շատ քնար-
ներ երգեցին. բայց մարդկեղէն երգն
ինչպէս կրնայ այնպիսի ճշմարտու-
թեանց մեծութեանն հաւասարիլ: Քեր-
դողը փորձեցին տաղերով բացատրել
զայն, բայց անբաւականացան բառ զըտ-
նելու, որպէս զի կարող ըլլան արտա-
յայտել այն բազմախտուն մտածութիւն-
ներն որ կը ծնանին ի մեզ այս զար-
մանալի խորհրդածութեամբք:

Փոխանակ անհուն գիշերոյ, որ երկ-
նից մինչև կապուտակ կամարը կը ձը-
գուի, փոխանակ գունազոյն ոսկեթել
նկարակերտ զգեստու կամ շողշողուն
պաճուճազարդ քողոյ, տիեզերական
կենաց և առուգութեան ծոցին մէջ կը
դտնուինք:

Գիշերն ուրիշ բան չէ, բայց եթէ դի-

պուած մըն է, բարեբաւտ դիպուած
մը, որ թոյլ կու տայ մեր տեսութեանն
այն սահմաններէն անդրադոյն ձկտիլ,
զոր ցորեկը մեզի կը սահմանափակէ.
Նման են այն ճանապարհորդին՝ որ բլրի
մը ստուերի տակն հանգչած կը դիտէ
լուսաւորուած տեսարանն որ իր առջևը
կը տարածուի մինչև հեռաւոր հորիզո-
նը: Փոխանակ անշարժութեան, լու-
թեան և մահու, հանդիսադիր կ'ըլլանք
աշխարհաց վրայի կենաց տեսարանին:
Ճշմարտութեան լուսոյն առջև մտացա-
ծին կամարները կ'աներևութանան, և
երկինք իր խորերը մեր առջև կը բա-
նայ, արարչութեան անհունութիւնը
միջոցներուն անհունութեանն հետ կը
յայտնուի, և մեր երկիրը կորսնցունե-
լով իր մեծութիւնն, որով մեր երևա-
կայութիւնը զարդարեր էր զայն, կ'անձ-
կանայ և կ'աներևութանայ, ու իրեն
նման մանր աշխարհաց բազմութեանն
հետ, ընդարձակութեան ծոցին մէջ
կ'երթայ կը կորսուի:

Բ

Տիեզերք

Ճշմարտութիւններ կան որոնց առջև
մարդկային միտքը կը խոնարհի ու
կ'ընկճի, զորոնք կը նկատէ սարսափ-
մամբ, և որոնց դէմ առ դէմ չկրնարնա-
յիլ, թէպէտև ըմբռնէ անոնց գոյու-
թիւնը և հարկաւորութիւնը. այսպիսի
ճշմարտութիւններ են միջոցին անբա-
ւութիւնը և տևողութեան անեղրու-
թիւնը:

Անկարելիք սահմանելու, վասն զի ո՞ր
և իցէ սահման ուրիշ բան չիկրնար ընել,
բայց եթէ խաւարեցունել մեր ունեցած
նախնական զաղափարը. այս ճշմար-
տութիւնները մեզի կը հրամայեն, մեր
վրայ կը տիրեն: Ուզել մեկնութիւն տալ
անոնց, անպտուղ աշխատանք մըն է.
բաւական է դնել զանոնք մեր մտա-
դրութեանն առջև. մէկէն կը յայտնեն
իրենց զօրութեանն անշափութիւնն:
Անոնց հազար ու մէկ սահմաններ աը-

ըուեցան, զորոնք աւելորդ կը սեպենք այս տեղ նշանակել, և ոչ անոնցմէ մէկն յիշել: Բայց կ'ուզենք մեր դիմացը բանալ տիեզերաց սահմանները, ու մէջը մտնել և փորձ փորձել թափանցելու անոր խորութիւնքն:

Հրանօթի մը բերնէն ելած գնտակն երազ ընթացք մ'ունի. վասն զի 400 մեղր տեղ կը կտրէ մէկ մանրերկրորդի մէջ: Սակայն այս երազութիւնը միջոցին մէջ մեր ընելիք ճամբուն համար շատ դանդաղ է. վասն զի մեր երազութիւնը ժամու մը մէջ հազիւ թէ 1/440 քիլոմետր կամ 360 փարսախ կ'ըլլայ, որ շատ յամրագնաց է: Բնութեան մէջ անհամեմատ կերպով աւելի երազ շարժումներ կան, զոր օրինակ, լուսոյ երազութիւնը, որ մէկ մանրերկրորդի մէջ 77,000 փարսախ տեղ կ'ընթանայ: Լաւագոյն է ասիկայ քան զառաջինը. տեղափոխութեան համար այս միջնորդը կրնանք առնուլ: Ուստի ռամկական օրինակաւ բացատրենք. հեծնենք լուսոյ ճառագայթի մը վրայ, և թողունք ինք զինքնիս որ իր երազ ընթացքովն առնու տանի:

Երկրէս ճամբայ ելնելով շտկենք ընթացքնիս ուղիղ գծով դէպ 'ի երկնից որ և իցէ կէտ մը: Առաջին մանրերկրորդէ մը ետե կը տեսնենք որ 77,000 փարսախ տեղ ճամբայ ըրեր ենք. երկրորդ մանրերկրորդէ մը ետե՝ 154,000 փարսախ տեղ. այսպէս շարունակենք ճամբանիս: Տասը մանրերկրորդ, վայրկեան մը, տասը վայրկեան ետե՝ յիսուն միլիոն փարսախ տեղ կտրած կ'ըլլանք: Առաջ տանինք ճամբանիս ժամ մը, օր մը, շաբաթ մը, առանց կենալու, ամիսներ, տարիներ, և մեր կտրած ճամբուն ուղղութիւնն արդէն այնչափ երկայն եղած կ'ըլլայ, որ եթէ քիլոմետրով կամ փարսախով ուզենք բացատրել, զայն չափող թիւը մեր իմացական կարողութենէն շատ վեր կ'ըլլայ, և ալ մեր մտացն անըմբռնելի քանակութիւն մը կը նշանակեն, վասն զի բիւրաւոր միլիոններ և միլիոնաւոր միլիոններ կ'ըլլայ: Բայց չդադրեցնենք մեր ընթացքը.

առաջ երթալով անդադուր մի և նոյն երազութեամբ, այսինքն 77,000 փարսախ ամեն մէկ մանրերկրորդին մէջ, թափանցենք ուղիղ գծով տարածութեան միջէն ամբողջ տարիներ, յիսուն տարի, դար մը, ... վերջապէս ուր կը գտնուինք: Շատոնց կտրեր անցեր ենք այն աստեղազարդ դաւառներն որ երկրէս կը տեսնուին. ետեւիս թողեր ենք այն վերջին սահմաններն, որոնց արդէն հեռադիտակին ուշքն այցելեր է. երկար ժամանակ է որ ուրիշ աշխարհներու մէջ կը դեգերինք, որոնք ամենևին քննուած չեն ու անծանօթ են: Չկայ միտք մը որ կարող ըլլայ այս կըտրուած ճամբուն ետեւէն երթալ. բիւրաւոր միլիոններ բիւրաւոր միլիոններու վրայ յաւելլով՝ ալ նշանակութիւն մը չեն ունենար. այս նորանշան տարածութեան առջին երեակայութիւնը կը դադրի, կ'ընկճի ու ոչինչ կը դառնայ: Եւ սակայն, հոս է այս առաջարկութեան զարմանալի կէտն. այն է թէ և ոչ քայլ մը յառաջացեր ենք միջոցին ընդարձակութեան մէջ:

Ամենևին սահման մը չենք անցած, իբր թէ նոյն տեղը կեցած ըլլայինք: Կրնանք նորէն սկսիլ մեր ընթացքն ուր որ հասեր ենք, և շարունակել ճամբորդութիւննիս՝ վրան յաւելլով նոյնչափ տարածութեամբուրիշ ճամբորդութիւն մը, դարեր կուտել դարերու վրայ նոյն ուղղութեամբ և նոյն երազութեամբ ընթանալով. և յառաջ վարել ճամբանիս առանց խոտորելու և առանց կենալու: Միջոցին որ և իցէ կողմը կրնանք ուղղել ընթացքնիս, աջ, ձախ, առաջ, ետե, վեր, վար, ամեն դի. և երբ այսպէս դարեր անդադար ընթանալէն ետե կանգ առնուինք չլացած և յուսաբեկ անեղր և մշտանորոգ անբաւութեան առջև, կիմանայինք որ մեր դարական ճախրանքը տարածութեան և ոչ փոքրագոյն մասն անդամ չափեր է. և թէ ճամբայ ելած տեղերնէս և ոչ կէտ մը հեռացեր ենք: Եւ իրօք անհունութիւնն ամեն կողմանէ կը պատէ զմեզ. և ինչպէս ըսինք թէ աշխարհաց թիւն անհամար է, այս.

պէս ալ կրնանք նաւել տիեզերածովուն մէջ յաւիտեանս ժամանակաց և միշտ կը գտնենք անբաւութիւնն առջկենիս անեզր պարզուած :

Ուստի միջոցին վրայ ունեցած գաղափարնիս պարզապէս վերբերական է. և երբ կ'ըսենք՝ դէպ 'ի երկինք, դէպ 'ի երկիր, ըստ ինքեան սխալական են այս բացատրութիւնները. վասն զի անբաւութեան ծոցին մէջ գտնուելով՝ ոչ դէպ 'ի երկինք կայ և ոչ դէպ 'ի երկիր, ոչ վեր կայ և ոչ վար. այս բառերն վերբերական զրուցուածք են երկրիս մակերևութին նկատմամբ ուր կը բնակինք :

Ուրեմն պէտք է երևակայել տիեզերս տարածութիւն մը անսահման, անեզր, անբաւ, անհուն, որուն ծոցին մէջ կը ճախրեն անթիւ արեւներ նման մերինին, և անհամար աշխարհներ նման որուն մէջ որ կը բնակինք : Ոչ գմբէթ, ոչ կամարք և ոչ սիւնք կան. դատարկութիւն ամեն կողմանէ կը պաշարէ. և այս անեզր դատարկութեան մէջ կը բոլորեն յաւիտեանական պար բիւրաւոր աշխարհներ իրենց ներդաշնակութեամբն 'ի փառս Արարչին :

ԹՈՒՉ ԱՍՏԵՂՔ

Տեսցեալ գամու գամու 'ի մօտալուտ փութորկի բօթ
Եւ թրուիչ աստեղծ յերկնից թափեալ 'ի սող սաղապա-
նէմ
Եւ 'ի մըթան գիշերին բոց ծիր 'ի ձիգ շողեալ ըզհետ....

ՎԻՐԳ. ՄՇ. ԳԻՐԻՔ Ա. 22.

« Եթէ արդի գիտութիւնը չստանալ գամ սխալեր է սկեպտական երկբայութեամբ, անշուշտ նախնի գիտութեան երկայն ժամանակեայ դիւրահաւատութեամբ սխալելը համարելու է պատճառը » : Տէհէրայնի այս հռչակաւոր վճիռը՝ թերեւ ցարդ չէ գտած այնպէս իրաւունք, ինչպէս յառաջիկայ քանի մը դիտողութեանց մէջ :

Ստոյգ է արդեօք թէ երբեմն երկրն քէն փայլուն լուսով և ահագին մղմամբ այլ և այլ մեծութեամբ քարեր կ'իյնան : Հիներն ոչ միայն չէին տարակուսեր այս

քարէ սնձրևի ստուգութեան վրայ, այլ և աստուածային և խորհրդական կը համարէին. և յերկնից ինկած քարերու՝ իբրեւ սրբազան և երկնային իրաց յարգութիւն կ'ընծայէին :

Կրետէ կղզւոյն մէջ ինկած հռչակաւոր շանքաքարը, զոր պաշտօնասէր Յոյնք իբրեւ խորհրդանշան կիւբելէի համարեցան. — Ս. Գրոց քարէ կարկուռն՝ որ շփոթեց իսրայելացւոց թշնամի զօրքը Բեթորոնի զառ 'ի վայրին վրայ. — Անջիլիան կամ նուիրական վահանը՝ որ երեցաւ 'ի Հռովմ՝ Նումա — Պոմպիլիոսի թագաւորութեան ժամանակն. — Քեապէի սլատուեալ սև քարն 'ի Մէքքէ. — Անթարայ սնգիւն սուրը՝ Մոնղոլաց վիպաց մէջ. — Գոյուշայի քուշգը Մէքսիկոյի մէջ՝ այս ամենքն ալ կը վերաբերին սոյն դասու երևութից. և քիչ զանազանութեամբ մի և նոյն պատմութիւնն ունին : Անաքսագորաս փիլիսոփայն մեծ անուն ստացաւ, իբրեւ նախագուշակ այն երկնաքարին անկման որ ազօրւոյ երկնաքարի կրկին թանձրութեամբ Ելլեսպոնտոսի մօտերը, Եգոս — Պոտամոսի երկրին վրայ ինկաւ. ուր Լիւսանդր քիչ ատենէն աթենական տորմիդը ցրուելով, պեղոպոնեսական պատերազմին վերջ տուաւ, և զըՍ. պարտիա նախիշխան ըրաւ բովանդակ Յունաստանի :

Բայց կոյր հակառակութեամբ մը, զոր գիտութեանց պատմութիւնը ոչ ինչ նուազ քաղաքական պատմութենէ մեղի կը ներկայացնէ, արդի գիտունք երկայն ժամանակ խորչեցան հաւատք ընծայելու այսպիսի երևութից : Եւ մինչև գաղղիական յեղափոխութեանց օրերը՝ Բարիզու Ուսմանց ճեմարանը խստիւ կ'արգելուր այսպիսի ենթադրութեանց չհաւատալ : Իմաստուն ժողովը՝ առանձին մասնաժողովոյ քննութիւնն ալ լսելով, սուտ կը հրատարակէր Լիւսէի մօտ ինկած մէտէորական քարը : Ի զուր ականատես վկաներ և ապացոյցներ կը բերուէին 'ի հաստատութիւն ստուգութեան : Սոյնպիսի արհամարհանաց և այլ պանաց նիւթ եղաւ և գիտուն ճեմարա-